Տաթև

Բնակչություն՝ 1042
Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 60 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 36 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1610 մ,

Տաթևը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, նշանավոր է Տաթևի վանական համալիրով: Այն եղել է հոգևոր-մշակութային կենտրոն, խոշոր վանական կալվածատիրական հաստատություն Մեծ Հայքի Սյունիք նահանգի Ծղուկք գավառում: Հիմնադրվել է 4-րդ դարում, 5-8-րդ դարերում եղել է դպրության առաջնակարգ կենտրոն, 8-րդ դարի վերջից՝ Սյունյաց Եպիսկոպոսության աթոռանիստը: 906 թվականին կառուցվել է վանքի Պողոս Պետրոս մայր տաճարը, 1067 թ՝ Ս. Աստվածածին դամբարան-եկեղեցին, 1295 թ Ս.Գրիգոր եկեղեցին: 1390-1435 թթ Տաթևի վանքում գործել է Տաթևի նշանավոր համալսարանը եւ մանրանկարչության ու գրչության դպրոցը: Վանքն ունեցել է խոշոր մատենադարան, որտեղ պահվել են 10 հազարից ավելի ձեռագիր մատյաններ: Միջնադարում վանքին հարկ է վճարել 10 գավառի 264 գյուղ: Այստեղ է գտնվում հայ մեծանուն փիլիսոփա, աստվածաբան Գրիգոր Տաթևացու դամբարանը: Տաթևը հանրահայտ է նաև իր ճոճվող խաչքարակիր-գավազանով, որը հայ ճարտարապետական մտածողության հետաքրքիր լուծումներից է: 17-րդ եւ 20-րդ դարի 20-ական թթ սկզբներին վանքը եղել է ազատագրական պայքարի կարևորագույն հենակետ: Նրա հետ են կապված բազմաթիվ նշանավոր իրադարձություններ և ավանդույթներ: 20-րդ դարի վերջերին վանքի տարածքում և շրջակայքում իրականացվել են շինարարական եւ վերականգնողական աշխատանքներ: Վանքը ներկայումս հիմնականում վերականգնված է և Սյունյաց թեմի հոգևոր կենտրոնն է:
Տաթևի տարածքում կան գյուղատեղիներ, եկեղեցիներ, հին գերեզմանոցներ: Այստեղ է գտնվում նաև Հայստանի բնության հրաշալիքներից մեկը՝ «Սատանի կամուրջը»:
ՀՀ կառավարության 26.06.2009 թ ««Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» N848-Ն որոշմամբ "Տաթև" վանական համալիրը և հարակից՝ ՀՀ Սյունիքի մարզի Խոտի, Շինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Աղվանիի և Բարձրավանի գյուղական բնակավայրերը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն: Նույն որոշմամբ հաստատվել են "Տաթև" զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները և գերակա խնդիրները:

Հայաստանի Ազգային մրցունակության հիմնադրամի 2010 թվականի փետրվարի որոշմամբ, Տաթև շրջանում զբոսաշրջության և տնտեսական զարգացման համար վերականգնվելու են Տաթևի վանական համալիրը, Մեծ Անապատը, համալիրի տարածքում դպրատունը, իսկ Տաթև զբոսաշրջային կենտրոնում հիմվելու է գիտակրթական համալիր:
Հիմնադրամի միջոցներով կառուցվեց և 2010թ հոկտեմբերի 16-ին հանդիսավորությամբ բացվեց աշխարհի ամենաերկար "Տաթևի թևեր" ճոպանուղին, որի երկարությունը կազմում է 5.7 կմ և ձգվում է Սյունիքի մարզի Հալիձոր գյուղից մինչ Տաթև վանական համալիրը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 216 գյուղացիական տնտեսություն:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 7627 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5216 հա, որից՝
- վարելահող՝ 408 հա, խոտհարք՝ 280 հա, արոտ՝ 2296 հա, այլ հողատեսք՝2232 հա
- բնակավայրերի հողեր՝ 166 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝15 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 12 հա,
- անտառային հողեր՝ 2183 հա, որից անտառածածկ՝ 1206 հա
- ջրային հողեր՝ 33 հա